ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Ուսումնական հաստատության անվանումը

Զ Ե Կ Ո Ւ Յ Ց

ԹԵՄԱ *Գույները մարդու կյանքում*

ՀԵՂԻՆԱԿ *Անուշ Աղաբեկյան*

Քննարկվել, հավանության է արժանացել

_____

_____

մեթոդմիավորման _____ նիստում: Արձանագրություն թիվ _____

Մեթոդմիավորման նախագահ _____ *Ռիտա Շալունց*
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ _____ *Սերգեյ Ավանեսյան*
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

Գույները մարդու կյանքում

Գույներն իրենց ողջ գեղեցկությամբ ու ներքին էությամբ բացվում են միայն նրա առջև,ով սիրում է այդ աշխարհը: Գույներից կարող է օգտվել յուրաքանչյուրը, սակայն միայն նրան, ով նվիրվում է այդ աշխարհին, գույները թույլ են տալիս հասկանալ իր գաղտնիքները:

(Ի. Իտտեն)

Նախագծի անձնագիրը

Խնդրի արդիականությունը

- *Ողջ տարվա ընթացքում հետևելով դասարանում իմ աշակերտների տրամադրությանը, ես նկատել եմ նրանց տրամադրության հաճախակի փոփոխությունը: Ես մտածել եմ, որ փոփոխության պատճառներից մեկը կարող է լինել տարվա եղանակների փոփոխությունը:*
- ***Աշնանը*** *մեզ կարող է համակել դեպրեսիան. կարճանում է ցերեկային օրը, եղանակը ցրտում է, գունատվում, հողմացրիվ են լինում տերևները, մռայլվում է երկինքը, անձրևում է օրը, իսկ առջևում ձմեռն է:*
- *Գարնանն ամեն ինչ հակառակն է. արևը տաքացնում է երկիրը, աշխարհը լցվում է ծաղիկներով, գարնանային անձրևից հետո երկնքում հայտնվում է ծիածանը, ամեն ինչ շողում է թարմ գույների մեջ: Որոշեցինք ուսումնասիրել, թե ինչ է գույնը և ինչպես է ազդում այն մարդու տրամադրության վրա:*
- *Նախագծի մասնակիցներ – 2-րդ դասարանի աշակերտներ*
- *Նախագիծն իրականացնող երեխաների տարիքը -7- 8տ.*
- *Նախագծի ղեկավար – Անուշ Աղաբեկյան*
- *Նախագծի տիպը – հետազոտական, ստեղծագործական*
- *Ուսումնական առարկան – «Կերպարվեստ»*
- *Անհրաժեշտ միջոցներ – համակարգիչ, հանրագիտարաններ, ֆոտոապարատ*
- *Նախագծի տևողությունը – 1 շաբաթ*
- *Կիրառման շրջանակները – նախագիծն անց է կացվում արտադասարանային գործունեության ժամանակ, իսկ նախագծային գործունեության արդյունքները ներկայացվում են կերպարվեստի դասաժամին:*

Նպատակը՝

- ***գույների մասին ձեռք բերել ընդլայնված գիտելիքներ,***
- ***հասկանալ գույների դերը մարդու կյանքում:***
- ***գույների աշխարհը ճանաչելու հիմքում հարմարավետ դարձնել մարդու կյանքը:***

Հիպոթեզ (վարկած)

- ***Հիպոթեզ (վարկած) -եթե գույնն ազդում է մարդու տրամադրության վրա, ապա մենք կարող ենք ստեղծել լավ, հաճելի տրամադրություն հաղորդող պայմաններ:***

Խնդիրներ՝

- ուսումնասիրել, ի՞նչ է գույնը, ո՞րն է նրա էությունը, հատկանիշները,
- պարզել, թե ինչու ենք մենք տեսնում այս կամ այն գույները,

- անցկացնել գործնական հետազոտություն, փորձեր
- գույնի նշանակությունը մարդու կյանքում,
- հետազոտել տարբեր գույների ազդեցությունը մարդկանց՝ մեծերի ու փոքրերի տրամադրության վրա:
- ուղիներ գտնել դասարանում ջերմ, բարենպաստ միջավայր ստեղծելու համար,
- եզրահանգումներ կատարել նախագծի վերաբերյալ:

Աշխատանքի պլան

- անհրաժեշտ ինֆորմացիան գտնել գրադարանում կամ ինտերնետում
- ուսումնասիրել գիտական գրականություն
- իրականացնել գործնական փորձեր
- մշակել ստացած ինֆորմացիան
- ըստ անցկացրած հետազոտության ստեղծել պրեզենտացիա

Գրական ակնարկ

Ի՞նչ է գույնը

Ըստ հանրագիտարանի, **գույնը առարկաների հատկանիշն է:** Սա առաջին ու հաստատուն պատկերացումն է գույնի մասին: Ինչքան էլ խոսենք գույների մասին, խնձորը մեր համար կանաչ է, կրակը՝ կարմիր, երկինքը՝ կապույտ, վարդը՝ կարմիր և այլն: **Գույնը** պարզապես լույս է, առանց որի չենք կարող ապրել: Մեր մարմնի բջիջները վերաբերմունք են ցույց տալիս և առատ գույնին և գույնի պակասին: Գույնն ազդում է մեր ֆիզիկական, մտավոր ու հոգևոր աշխարհի վրա: Օրինակ՝ երկնքում փայլող պայծառ արևից մենք ակնածանք ու պատկառանք ենք զգում, իսկ ծիածանից՝ հույս:

Վաղնջական ժամանակներից մարդիկ հավատում էին, որ գույնն ունի խորհրդավոր ուժ: Մենք ասում ենք, որ լավատեսը ամեն ինչին նայում է վարդագույն ակնոցներով, իսկ երբ տխուր ենք, ամբողջ աշխարհը մեզ համար դժգույն է:

Իսկ հակառակ ազդեցություն ունի՞ գույնը մեր տրամադրության, զգացմունքների, մտքերի վրա:

Մեր նախնիները գույնի բուժիչ ուժը զգացել են ավելի ուժեղ, քան մենք: Հաղորդակից լինելով բնությանը և հետազոտելով շրջակա աշխարհը, նրանք իմացել են, թե ինչ հատկանիշներ ունի այս կամ այն գույնը:

Կարմիրն, օրինակ, համարվում էր թանկարժեք կրակի գույնը, որը ջերմացնում էր մարդկանց, որի վրա սննունդ էին պատրաստում: Այն նաև արյան գույնն էր, որ հոսում էր իրենց երակներում: Այսպիսով, կարմիրը համարվում էր կյանքի գույնը և մեր նախնիները կիրառում էին այն արվեստում և կրոնական արարողությունների ժամանակ:

Մենք գույների աշխարհում ենք, նրանք շրջապատում են մեզ: Սակայն ոչ բոլորին է հուզում, թե մեր կյանքում ինչ դեր են խաղում նրանք:

Ինչպես է այն ազդում մարդու ֆիզիկական, մտավոր, հոգևոր վիճակի վրա:

Ծնված օրից բոլորը գիտեն, թե ինպես ես պայծառանում, երբ մութ ամպերի տակից դուրս է գալիս պայծառ արևը և որքա՜ն մեծ է լինում հրճվանքը, երբ երկնքում անձրևից հետո հայտնվում է ծիածանը:

Նախագծի ընթացքում կիրառված մեթոդները.

- աշխատանք համապատասխան գրականության և ինտերնետ -ռեսուրսների հետ,
- զրույց,
- Անկետավորում (աշխատանք հարցաթերթիկներով),
- փորձ,
- ընդհանրացում:

Ակնկալվող արդյունք

- սովորողներն ավելի խորությամբ կճանաչեն շրջապատող աշխարհը, կիմանան սպիտակ լույսի բաղադրությունը, կկարողանան պարզ գույներից ստանալ բաղադրյալ գույներ, կիմաստավորեն յուրաքանչյուր գույնի էությունն ու ազդեցությունը մարդու հոգևոր աշխարհի վրա, ուսումնասիրությունների արդյունքում կկարողանան եզրահանգումներ կատարել

Նախագծի ընթացքը

Նախագծի փուլեր

- Կազմակերպչական փուլ (1 օր)
- Հիմնական փուլ (5 օր)
- Ավարտական փուլ (1 օր)

Կազմակերպչական փուլ

- Անց է կացվում զրույց «Իմ սիրած գույնը և ինչո՞ւ եմ սիրում այդ գույնը» թեմայով, որի արդյունքում սովորողներն առաջ են քաշում **վարկածը:**
- ***<u>Հիպոթեզ (վարկած) -</u> եթե գույնն ազդում է մարդու հոգու և տրամադրության վրա, ապա մենք կարող ենք ստեղծել լավ, հաճելի տրամադրություն հաղորդող միջավայրային պայմաններ:***

Հետազոտական հարցերի ձևակերպում /ի՞նչ եմ ուզում իմանալ/



- Աշակերտները բաժանվում են խմբերի և յուրաքանչյուր խումբ ընտրում է առաջադրված թեմաներից մեկը.
- Ինչպե՞ս է առաջանում ծիածանը:
- Ինչո՞ւ ենք մենք տեսնում այս կամ այն գույնը: Քանի՞ գույն է ունակ տեսնել մարդու աչքը:
- Գույների ազդեցությունը մարդու տրամադրության, հոգեկան աշխարհի վրա:
- Գույների ընկալումը և դրանց բուժիչ նշանակությունը:

Հիմնական փուլ

- Ըստ թեմաների աշակերտները սկսում են ինֆորմացիա հավաքել /ինքնուրույն և խմբային աշխատանք/
- Հետազոտական աշխատանք, լաբորատոր փորձ
- Ստեղծագործական աշխատանք
- Հավաքած ինֆորմացիայի վերլուծություն /դպրոցում ուսուցչի հետ միասին/
- Աշխատանքների ձևավորում/խմբային աշխատանք/

Ավարտական փուլ

- Եզրահանգումներ
- Նախագծի պաշտպանություն

Հավաքած ինֆորմացիայի վերլուծություն /դպրոցում ուսուցչի հետ միասին/: Արևի ճառագայթներն ունեն զարմանալի հատկանիշներ: Նրանք բեկվում են ապակե եռանիստ պրիզմայով միջով: Այդ բացահայտումն առաջին անգամ կատարել է անգլիացի ֆիզիկոս ԻսահակՆյուտոնը 1666 թվականին:

Ի՞նչ է իրականում լույսը



Արևի արձակած լույսն անվանում են սպիտակ լույս: Իրականում այդ սպիտակ լույսը յոթ գույների խառնուրդ է: Առաջին անգամ այս երևութն ապացուցել է անգլիացի գիտնական Իսահակ Նյուտոնը 17-րդ դարում: Արևի ճառագայթի ճանապարհին նա տեղադրեց պրիզմա: Հակառակ պատին նա տեսավ բազմագույն սպեկտոր, որը կազմված էր ծիածանի յոթ գույներից. կարմիր, նարնջագույն, կանաչ, երկնագույն, կապույտ, մանուշակագույն:

Գործնական աշխատանք՝ «*Գույների ծնունդը*»

- *տարբեր գույների խառնուրդներից ստացանք տարբեր նրբերանգներ և իմացանք, թե ինչպես կարելի է ստանալ ցանկացած գույնը:*
- *Միաժամանակ ուսումնասիրեցինք պարզ գույների և գունային նրբերանգների սխեմաները.*



Կրկնեցինք Նյուտոնի փորձը լաբորատոր պայմաններում:

Ինչո՞ւ ենք մենք տեսնում այս կամ այն գույները

- Բոլոր առարկաները կլանում և անդրադարձնում են լույսի ճառագայթները:
- Մեր աչքը տեսնում է անդրադարձրած ճառագայթի գույնը:
- Մարդու կարողանում է տարբերակել միլիոն ու կես գույն և նրբերանգ:
- **Գոյություն ունեն գույների բազմաթիվ նրբերանգներ, որոնց մեջ տարբերակվում են՝**
- **սառը տոներ,** որոնք թուլացնում ու հանգստացնում են, օգնում կենտրոնանալ, հավաքել մտքերը,
- **տաք տոներ,** որոնք առույգացնում են, բարձրացնում տրամադրությունը:
- Պատկերացնենք ծովը՝ ստվերային մասերում ձյունը, սառույցը, գիշերային աստղալից երկինքը, ֆիզիկական որակներով սառը և կապույտ գույն: Կապույտ գույնը երկնքի գույնն է, այն սառն է, սակայն պայծառ:
- **Տաք գույները** արթնացնում են ուրախ զգացումներ: Արևը մեզ ներկայանում նարնջագույն, դեղին, կարմիր: Հավանաբար, տաք գույները որպես տաք գույն են հանդես գալիս շնորհիվ արևի, նրա կյանքի էներգիայի, առանց որի մարդկությունը չի կարող ապրել:

- Տաք գույներում գերակշռում են դեղինի, կարմիրի և նարնջագույնի երանգները:
- Տաք գույները հիշեցնում են մեզ լուսատու, կրակ:
- Սառը գույները հիշեցնում են ցրտի ու ձյան մասին՝ կապույտ, երկնագույն, մանուշակագույն:

- **Կանաչ** գույնը խաղաղեցնում է, հրաշալի ազդեցություն ունի աչքերի լարված մկանների վրա: Այն բնության մեջ գերիշխող գույնն է և հանգստի համար անփոխարինելի:
- **Երկնագույնը** հարմար է օգտագործել օֆիսներում: Այն օգնում է կենտրոնանալ աշխատանքի վրա, հանգստացնում է, բարձրացնում է իմունիտետը, օրգանիզմում ճնշում բորբոքային պրոցեսները, հանգստացնում արևայրուքից առաջացած քորը:

- **Կապույտը** հանում է լարվածությունը, իջեցնում արյան ճնշումը, հանգստացնում շնչառությունը:
- **Մանուշակագույնը** ուժեղացնում է ինտուիցիան, մեծ քանակը կարող է առաջացնել դեպրեսիա:

- **Դեղինը** ուժեղացնում է մտավոր ակտիվությունը, օգնում է մտավոր աշխատանքին:
- **Նարնջագույնը** բարձրացնում է տրամադրությունը, ինքնագնահատականը: Նարնջագույնը ստեղծում է ուրախության ու բարեկեցության զգացողություն, խորհրդանշում է տոն, վայելք:
- **Կարմիրը** էներգիա է տալիս, արագացնում է պուլսը, բարձրացնում է ախորժակը: Սակայն մեծ քանակով կարող է առաջացնել ագրեսիա:

- Կարմիր գույն-ջերմացնում է, ակտիվացնում
- Դեղին գույն – տաք է, կայտառ ու գրավիչ
- Նարնջագույն — ուրախ է, բարի ու զվարթ
- Կանաչ գույն – ստեղծում է հանգիստ, հաճելի և խաղաղ տրամադրություն
- Կապույտ գույն – տխուր է, լուրջ է, թախծոտ է, հանգիստ է
- Մանուշակագույն- միաժամանակ և ձգում է, և հեռացնում, միաժամանակ լի է կյանքով և թախիծ է առաջացնում:

Գույնի ազդեցությունը մարդու վրա

- Գույնը կյանք է, այն մեզ ուժ է տալիս, կենդանացնում, բուժում և հիացնում:
- Մենք օգտվում ենք գույներից ենթագիտակցորեն:
- Հագնվում ենք՝
- պայծառ գույներ, որպեսզի բարձրացնենք մեր տրամադրությունը
- ցուրտ գույներ, որպեսզի հանգստանանք:
- *Սակայն, նույն գույնը կարող է առաջացնել և դրական, և բացասական հույզեր:*

Գույների բուժիչ հատկությունները

- ***Հուզական վիճակների թեթևացման միջոցներ***
- Տոն օրերին, միջոցառումներին օգտագործում ենք գունավոր լույսեր:
- Երբ անհրաժեշտ է հանգստանալ, միացնում ենք փափուկ, մեղմացրած երանգով լույս:
- Լոգանք գունավոր ջրի մեջ:
- Կրում ենք որոշակի գույներով զարդաքարեր և այլն:

Գույնի նշականակությունը մարդու մշակույթում

- կապույտ գույնը զուգորդվում է երկնքի հետ, աստվածային զգացողությամբ
- դեղինը խորհրդանշում է արևը
- կարմիրը կրակի գույնն է և նշանավորում է հանդիսավորություն
- ծիրանագույն- ուժ, հզորություն, արժանապատվություն
- երկնագույն- գեղեցկություն, վեհություն
- սպիտակ – մաքրություն, անմեղություն
- կանաչ – հույս

- **սևը** կարմիրի հետ-մահ
- Ինչքան աղքատ, սառն ու անհետաքրքիր կլիներ մեր կյանքն առանց բնության ու մարդու ստեղծած վառ գույների:
- Գույնը մեզ հաղորդում է ուրախություն և տխրություն, խռովում է և հանգստացնում, բուժում ու նախազգուշացնում է վտանգի մասին:

Մարդու տրամադրության վրա տարբեր գույների ազդեցության հետազոտությունը

- Կազմակերպեցինք գործնական փորձ **«տարբեր գույների խառնուրդների ազդեցությունը մարդու տրամադրության վրա »:**
- Փորձից հետո կատարեցինք կոլեկտիվ համապատասխան գույներով նկարների ստեղծման ստեղծագործական աշխատանք:
- Այնուհետև երեխաները կազմակերպեցին սոցիոլոգիական հարցում մեծահասակների ու երեխաների հետ:
- *Ո՞րն է ձեր սիրած գույնը:*
- *Կարո՞ղ են գույներն ազդել ձեր տրամադրության վրա:*
- Այնուհետև իմ կողմից անցկացվեց երեխաների տրամադրության հետազոտություն: Հետազոտության ընթացքում ես տեսա, որ կախված տրամադրությունից, երեխաները գունային նրբերանգներից ընտրում են համապատասխան տաք կամ սառը գույներ:

Դասարանում «բարի» տրամադրության ստեղծում

- Երեխաների առույգության և լավ տրամադրության պահպանման համար առաջարկեցի կատարել հետևյալ աշխատանքները.
- Նկարեցինք նկարներ կոնկրետ գույների կիրառմամբ և կազմակերպեցինք ցուցահանդեսներ.
- «Կարմիր» ցուցահանդես,
- «Դեղին» ցուցահանդես,
- «Կապույտ» ցուցահանդես,
- «Նարնջագույն» ցուցահանդես,
- «Երկնագույն ցուցահանդես»,
- «Մանուշակագույն» ցուցահանդես և այլն:
- Տարբեր գույների խառնուրդներից ստացանք յուրօրինակ նկարներ:
- Տարբեր գույներով ստեղծեցինք զարդանախշեր:

Եզրահանգում

- Գույներիի ուժը կայանում է նրանում, որ այն կարող է անմիջականորեն ազդել մարդու ներաշխարհի վրա:
- Երբ մենք ընտրում ենք որևէ գույնի հագուստ կամ այլ բան, այդ պահին ակամայից ինքնարտահայտվում ենք(ըստ ուսումնասիրած գրականության՝ հավասարակշռում ենք մեր ներքին էներգիան):
- Գույների օգնությամբ մարդը կարող է բուժել ֆիզիկական, հոգեկան և հոգևոր տկարությունը: Շրջապատելով մեզ մեր նախընտրած գույներով, մենք կարծես բուժում ենք ինքներս մեզ:
- Գույնն առաջացնում է հոգեբական ռեակցիա. ստեղծում է կամ տաք, կամ էլ սառը միջավայր(արտացոլում տարվա գույները):
- Ես գտնում եմ, որ վարկածը՝

եթե գույնն ազդում է մարդու տրամադրության վրա, ապա մենք կարող ենք ստեղծել լավ, հաճելի տրամադրություն հաղորդող պայմաններ, հաստատվում է:

Նախագծի գնահատման թերթիկ

N	Գնահատման չափանիշներ				
1	Ընտրված թեմայի արդիականությունը				
2	Թեմայի բացահայտման խորությունը				
3	Նախագծի գործնական նշանակությունը				
4	Կոմպոզիցիոն կուռ կառուցվածք				
5	Շարադրանքի ստրամաբանականություն				
6	Համապատասխանությունը պլանին				
7	Եզրահանգումների հիմնավորվածությունը				
8	Ձևակերպումների ճշտությունն ու գրագիտությունը				
9	Դիզայնը				
10	Աշխատանքի կատարման ինքնուրույնությունը				
11	Սեփական նյութերի (հեղինակային)կիրառություն				
12	Բովանդակալից ներդիր				
13	Սկզբնաղբյուրների կիրառություն				
14	Պաշտպանության սցենարի շարադրման ստրամաբանականությունը				
15	Հաշվետվության գրագետ կառուցվածքը				
16	Ամենահետաքրքիրն ու ամենաարժեքավորը ներկայացնելու կարողություն				
17	Նյութին տիրապետելը				
18	Հարցերին պատասխանելու կարողությունը				
19	Սեփական տեսակետը պաշտպանելու կարողությունը				
20	Լսարանին տիրապետելու կարողությունը				

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Миронова Л.Н. Цветоведение. Минск, 1984.
2. Фрумкина Р.М. Цвет, смысл, сходство. М., 1984.
3. Ж. Агостон “Теория цвета и её применение в дизайне” М. “Мир” 1982 г.
4. Б. А. Шашлов “Цвет и цветовоспроизведение” М. “Книга” 1986 г.
5. Дженис Линдси “Все о цвете” Книжный клуб 36.6. 2012
6. Люшер М. Цвет вашего характера/Сара Д. Тайны почерка. – М.: Изд. «Вече: Персей», 1996.
7. Драгунский В.В. Цветовой личностный тест. – М.: Изд. «Харвест», 2000. (Серия «Библиотека практической психологии»).
8. Клар Г. Тест Люшера. Психология цвета. – М.: Изд. «Питер», 1998.
9. Люшер М. Оценка личности посредством выбора цвета. – М.: Изд. «ЭКСМО-Пресс», 1998.
10. Фрилинг Г., Ауэр К. Человек – цвет – пространство. – М.: Изд. «Питер», 1995.

- Гурвич Е.М. Исследовательская деятельность детей как механизм формирования представлений о поливерсионности мира создания навыков исследования ситуаций // Раз- витие исследовательской деятельности учащихся: Методический сборник. М.: Народное образование, 2001. С.68-80
- Логинова Н.А. Феномен учительства: приобщение к научной школе. // Психологи- ческий журнал. 2000
- Меренкова О.Ю. Научно-исследовательская работа в школе: в помощь учителю, классному руководителю. Методическое пособие. – М.: УЦ Перспектива, 2011. – 48с.
- Пахомова Н.Ю. Учебные проекты: его возможности. //Учитель, № 4, 2000, - с.52-55